

Վարդան Զ. Պետրոսյան  
Բանասիր. գիտ. թեկնածու

## ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿԲԱՐՔԱՌՆԵՐԸ (տարածամանակյա քննություն)\*

**Բանալի բառեր** – երկբարբառ, հին հայերեն, տարածամանակություն, հունական փոխառություն, իրանական փոխառություն, երբայերեն, գրադարձություն, նախագրաբարյան փուլ, Ս. Գիրք, անձնանուն:

### Մուտք

Հին հայերենի երկբարբառային կազմությունների<sup>1</sup> տարածամանակյա դիտարկումներ առկա են Հ. Հյուբշմանի, Հ. Պեդերսընի, Ա. Մեյերի, Հ. Աճառյանի, Գ. Զահուկյանի, Է. Թումանյանի և Յու. Գաբրիելյանի աշխատություններում: Բացառությամբ վերջինի, որն ինչպես առհասարակ հին հայերենի, այնպես էլ մասնավորապես նշված հիմնահարցի քննությունն իրականացնում է **բնական լեզվաբանության**

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.04.2023:

1 Հին հայերենի երկբարբառային կազմությունների համաժամանակյա քննության անդրադարձել ենք մեր մի քանի աշխատանքներում (տես **Պետրոսյան Վ.**, Երկբարբառային և եռաբարբառային կազմությունները գրաբարում, «Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր», Եր., 2016, էջ 211-231, **Մույնի**՝ Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը, «Վեմ», Եր., 2015, N 3, էջ 115-127, **Մույնի**՝ Հին հայերենի երկբարբառային կազմությունների հնչյութաբանական և հնչյունաբանական արժեքները, «Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 2018, էջ 57-78, **Մույնի**՝ Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ), «ԲԵՀ. Բանասիրություն», Եր., 2023, N 1, էջ 57-67): Նշված միավորների մասին ներկա աշխատանքում տեղ գտած մեր պատկերացումը շուրջ ութնամյա հոլովույթի արդյունք է, որը ձևավորվել է աստիճանական բարեշրջման ճանապարհով և արտացոլվել է վերջին «Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ)» հոդվածում: Այդ աշխատանքում մենք տարբերակել ենք 8 երկբարբառ, որոնցից 1-ը՝ *կայուն (ես)*, 7-ը՝ *ոչ կայուն (էա, էի, էո, իա, իե, իէ, իո)* տեսակի, և 15 երկբարբառակերպ (*աւ, եւ, իւ, ու, ւա, ւե, ւի, ւէ, տո, այ, ոյ, յա, յի, յե, յո*): Թեպետև սույն հոդվածում հին հայերենի երկբարբառային կազմությունները քննելու ենք տարածամանակյա հայեցակերպով, բայց դրանց կազմի և խմբավորման մասին այստեղ հիշատակելը կարևոր ենք համարում, որովհետև այդ բաղադրիչների զգալի մասը՝ որպես այդպիսին, մինչ օրս չի տարբերակվել հնչյութաբանական այդ բարդ միավորների քննությանը վերաբերող աշխատանքներում՝ լինեն դրանք մենագրական ուսումնասիրություններ, թե բուհական ձեռնարկներ:

Վեմ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 2 (82), ապրիլ-հունիս, 2023

սկզբունքների համաձայն<sup>2</sup>, մյուսների նկատառումներն ընդհանուր առմամբ ավանդական հնդեվրոպաբանության պատկերացումների տիրույթում են: Եթե վերոհիշյալ հեղինակներից ոմանք սահմանափակվել են միայն հին հայերենի երկբարբառային կազմությունների (ըստ իրենց՝ երկբարբառների)՝ հ.-ե. նախաձևերի հետ ունեցած ծագումնաբանական առնչությունների մատնանշումով (Գ. Ջահուկյան, Է. Թումանյան)<sup>3</sup>, ապա մյուսների տեսակետներում առկա են նաև քննական բնույթի առանձին դիտարկումներ (Հ. Հյուբշման, Հ. Պեդերսըն, Ա. Մեյե, Հ. Աճառյան)<sup>4</sup>: Այդ դիտարկումները, առանց բացառության, վերաբերում են «ձայնավոր + ձայնորդ» («V + S») և «ձայնորդ + ձայնավոր» («S + V») տիպի կաղապարներով երկբարբառային կազմություններին: Հին հայերենի վերոհիշյալ տիպի կազմությունները, նույնիսկ հ.-ե. երկբարբառային համակարգից սերածները (հմմտ. **աւ** (au), **եւ** (eu), **ոյ** (oi) և այլն) մաքուր երկբարբառներ (diphthong/дифтонг) չէին, այլ երկբարբառակերպեր (diphthongoid/дифтонгоид): Սույն աշխատանքում տարաժամանակյա տեսանկյունից քննվում են բացառապես «ձայնավոր<sub>1</sub> + ձայնավոր<sub>2</sub>» («V<sub>1</sub> + V<sub>2</sub>») տիպի կաղապարով երկբարբառները: Այսինքն՝ այն երկբարբառները, որոնց բաղադրիչներն առանձնաբար վանկարար գործառույթ են իրականացրել հին հայերենում: Իսկ վանկարարության հատկանիշը երկբարբառ բաղադրելու հիմնական պայմաններից մեկն է, որը բնորոշ չէր հին հայերենի «V + S» և «S + V» կաղապարներով երկբարբառային կազմություններին:

### Երկբարբառների տարաժամանակյա բնութագրերը

Հին հայերենի երկբարբառներից՝ **եա** (ea), **էա** (ēa), **էի** (ēi), **էո** (ēo), **իա** (ia), **իե** (ie), **իէ** (iē), **իո** (io), միայն առաջինը՝ **եա** (ea)-ն էր **կայուն** տեսակի, մյուսները վերաբերում են **ոչ կայուն** տեսակին<sup>5</sup>:

**եա** (ea)-ն ուներ հ.-ե. որոշ համապատասխաններ, այն է՝ \*eǵā, \*ǵə, \*ǵe, \*ei, \*ey: Վերջիններից ընդհանուրինդեվրոպականում երկ-

2 Տե՛ս **Պարրիեյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 144-161:

3 Տե՛ս **Джаукян Г.**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 36, **Туманян Э.**, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, էջ 43-44:

4 Տե՛ս **Հյուբշման Հ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 226, **Պեդերսըն Հ.**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 107, 126, **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 44, **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, Եր., 1971, էջ 511-516:

5 Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի երկբարբառային և եռբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ), էջ 57-67:

բարբառ է համարվում \*ei-ն, բայց այն հազիվ թե կարող էր լինել հյ. **եա** (ea)-ի անմիջական նախածնը թեկուզև այն պատճառով, որ հավաստված է մեկ օրինակով, այն էլ՝ թեական վերականգնումով (հմմտ. \*kleitmo- (?) > **լեառն** (?) (սեռ. **լերին**): Մյուս օրինակներում **եա** (ea)-ն ունի հ.-ե. այլ՝ ոչ երկբարբառային համարժեքներ (հմմտ. \*geiā(ə-) (?) > **կեամ**, \*g<sup>h</sup>iə-nā- > **կեանք** (սեռ. **կենաց**), \*(l)iek<sup>h</sup>it- > **լեարդ**, \*sneurt- > **նեարդ**):

Հ.-ե. ծագման բառերից բացի, **եա** (ea)-ն հանդիպում է՝ 1) ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ կառուցվածք ունեցող մի շարք գոյականների ուղիղ կամ թեք հոլովածներում, 2) իրանական և հունական որոշ փոխառություններում:

Առաջին կարգի բառերից մի քանիսի ծագումը դեռևս համարվում է անհայտ, կամ էլ ստուգաբանությունը համոզիչ չէ: Դրանցից են՝ **այծեամն**, **պատանեակ**, **սենեակ**, **վայրկեան**, **տեառն** «տիրոջ» (**տէր**-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), **սեան** (**սիրն**-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), **ձեան** (**ձիրն**-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), **արեան** (**արիրն**-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) և այլն: Նշվածներից բաղադրյալ կառուցվածք ունեն **այծեամն**, **պատանեակ**, **վայրկեան**, **տեառն** բառերը (հմմտ. **այծեամն** (սեռ. **այծեման**), **պատանի+ակ** (= **պատանեակ**), **վայր+(ի)կ+եան**<sup>6</sup>, **տի** (< \*տէ)+**առն** (= **տեառն**)<sup>7</sup>):

Գրաբարյան հայերենի բառակազմության տեսանկյունից (համաժամանակյա հայեցակերպ) **սենեակ**-ը պարզ բառ է: Տարածա-

6 Այս բառի հիմքն է **վայր**-ը, որն ուներ ինչպես տեղ, այնպես էլ ժամանակ նշանակող իմաստային լայն ընդգրկում «դուրս, վայր, տեղ, ցած. պահ, փոքր ժամանակ»: **Վայրկեան** ձևը, ըստ ամենայնի, կազմվել է **վայր-իկ** բաղադրյալ հիմքից՝ **-ի**-ի սղումով, իսկ **-եան** վերջածանցը սերում է «իրանական *-ān*-ի *-yān* տարբերակից» (**Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Եր., 1998, էջ 22): Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը **վայր** արմատը դասում են չստուգաբանվածների շարքին (տես **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. IV, Եր., 1979, էջ 300-301, **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Եր., 2010, էջ 703), սակայն վերջինս չի բացառել բառի իրանական ծագումը. «Ծագումն անհայտ է (իրանական)» (**Ջահուկյան Գ.**, ՀՍԲ, էջ 703): Ըստ Հ. Պետրսյանի **վայր**-ը առաջացել է **վարեմ**-ի **վար** «հողը հերկելը, վարուցան, հերկած հող» արմատից. *-յ*-ն «միջամիտություն» է, այսինքն հավելում արմատի մեջ, այլ կերպ աճական (տես **Պետրսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 117): **Վարն** իրանական փոխառություն է՝ *vaδ*- «վարել, քշել» ձևից (տես **Աճառյան Հ.**, ՀՍԲ, հատ. IV, էջ 313, **Ջահուկյան Գ.**, ՀՍԲ, էջ 705): Նկատի ունենալով, որ 1) հին հայերենի **վ**- սկիզբով բառերը սովորաբար իրանական փոխառություններ են, համեմատական քերականության հարցեր, 1998, էջ 22), ինչպես նաև այն, որ կասկածից դուրս է **-եան** վերջով իրանական փոխառությունների առկայությունը (**պատեան**, **մատեան** և այլն), թերևս ամենից հավանականն է **վայր**-ի հենց իրանական փոխառություն լինելը, որից հայերենում կարող էր բաղադրվել **վայրկեան**-ը:

7 Տես **Աճառյան Հ.**, ՀՍԲ, հատ. IV, էջ 401-402, **Ջահուկյան Գ.**, ՀՍԲ, էջ 728:

մանակյա հայեցակերպում այն կարող է տարրալուծվել բաղադրիչների, եթե հնարավոր լինի բառի արժանահավատ ստուգաբանումը: Հ. Աճառյանը, ներկայացնելով **սենեսակ**-ի «1. սենյակ, խուց, շտեմարան, մառան, գանձարան. 2. կանանոց, հարս, հարձ»՝ այլոց կողմից առաջարկված ստուգաբանությունները, չի ընդունում դրանցից և ոչ մեկը<sup>8</sup>: Գ. Զահուկյանը հնարավոր է համարել **սենեսակ**-ի կապը հ.-ե. \*skī- «թույլ փայլել, ստվեր» արմատի հետ՝ առնչություն տեսնելով հուն. σκηνή «վրան, բեմ, սրահ» և ռուս. сень «հովանի», сени «սրահ, նախասենյակ» բառերի հետ<sup>9</sup>: Մեր կարծիքով, սակայն, առավել հավանական է Ն. Մառի առաջարկած ստուգաբանությունը, ըստ որի՝ **սենեսակ**-ը ծագումնաբանական կապ ունի ուրարտերենի («խալդերենի») šir-sini «քարաշեն տուն», sini «տուն, սենյակ», šina «տուն» բառերի հետ<sup>10</sup>: Կարծում ենք՝ Ն. Մառի նշած ձևերը համադրելի են ուրարտերենի seiršini / si-ir-ši-ni ձևերի հետ, որոնք իրենց հերթին իմաստաբանորեն հարաբերակից են esi «տեղ, տեղանք» ձևին<sup>11</sup>: Ինչպես հնչյունական կազմի, այնպես էլ իմաստի տեսանկյունից **սենեսակ**-ի կապը ռուսական ձևերի հետ հավանական է, բայց հազիվ թե կարելի է նույնն ասել հունականի և, առավել ևս, հ.-ե. \*skī- նախաձևի մասին: Առնվազն իմաստային առումով արժանահավատ չէ նաև հ.-ե. \*skī- նախաձևի առնչությունը հունական և ռուսական ձևերին: Կարծում ենք՝ չպիտի բացառել **սենեսակ**-ի ծագումնաբանական առնչությունը նաև իրանական šī «բնակվել» արմատի հետ, որի պիլ. \*šēn ձևից է փոխառվել հյ. շէն «շինվածք, շինություն» բառը (հմմտ. ավեստա šayana- «բնակատեղի», սողդ. šēn «հանգստի տեղ») <sup>12</sup>: Եթե հաստատվեն նշված գուգահեռները, այսինքն՝ հյ. **սենեսակ**-ի կապը, մի կողմից, ուրարտ. šir-sini «քարաշեն տուն», sini «տուն, սենյակ», šina «տուն» ձևերի և մյուս կողմից՝ իրան. šī «բնակվել» արմատի հետ, ապա հնարավոր կլինի խոսել ծագումնաբանական ավելի լայն առնչությունների մասին, քան պարզապես այդ ձևերից մեկի կամ մյուսի հետ **սենեսակ**-ի ծագումնաբանական կապի մատնա-

8 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. IV, էջ 201:

9 Տե՛ս Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 676:

10 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. IV, էջ 201:

11 Տե՛ս Мещанинов И., Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, էջ 253:

12 Տե՛ս Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 213, Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 513, Զահուկյան Գ., ՀԱԲ, էջ 586: Հ. Հյուբշմանը հյ. շէն-ը հարաբերակից է համարել ավեստայի šayana- «բնակատեղի» ձևին (տե՛ս Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, էջ 214):

նշումն է: Վերոշարադրյալից երևում է, որ **սենեակ**-ի՝ առնվազն վերը նշված **հ.-ե.** նախաձևից անմիջականորեն սերած լինելու հավանականությունը փոքր է: Ուրարտական ժառանգություն լինելու վարկածը հիմք ընդունելու դեպքում, որին մենք ավելի ենք հակված, կարելի է ենթադրել *sini / šina* «տուն, սենյակ» արմատներին **-ակ** (-ak) նվազական մասնիկի (վերջածանցի) հավելում դեռևս նախագրաբարյան փուլում<sup>13</sup>, այն է՝ *s(š)ini+ak*, այլ կերպ՝ **\*շ(/ս)ինի+ակ** (>**\*սինեակ**) > **սենեակ** «փոքր տուն, տնակ» (ինչպես որ՝ **պատանի+ակ** > **պատանեակ**), այստեղից էլ՝ «սենյակ» նշանակությունը: **Սենեակ**-ի մյուս իմաստները՝ «մթերանոց, գանձարան. կանանոց. հարս, հարձ», ըստ ամենայնի, հետագա զարգացումներ են: Ինչ վերաբերում է ուրարտերեն *i* > *hj.* **ե** (*e*) անցումին, ուրարտերենագիտության տվյալների համաձայն ուրարտական տեքստերում սովորական էր *e* // *i* ձայնդարձը, ըստ այդմ՝ միևնույն սեպագրի *e* կամ *i* տարբերությունը<sup>14</sup>:

Իրանական փոխառություններից **եա** (*ea*) երկբարբառ ունեն հետևյալ բառերը. **\*ā-hōyak** (?) > ավ. *haoya*, մ.պ. *hōyak* > *hj.* **ահեակ** «ձախ», մ.պ. **\*dāyak**, պ. *dāya* > *hj.* **դայեակ** «ստնտու, խնամակալ», *mātyān* (*mātikān*). մ.պ. (վաղ) *mātikān*, (ուշ) *mātyān* > *hj.* **մատեան** (-ի) «թուղթ, գիրք», **\*pat-** (?) > **պատեան**<sup>15</sup> «1. սրի կամ դաշույնի տուփը. 2. պողի կարծր կեղևը», իրան. **\*sārīk**. պ. *sārī*, մ.պ. *sār*, *sārī* (> պիլ. *sārīk* (> *hj.* **սարիկ**) և *sārīca*, վերջինից էլ, ըստ Հ. Աճառյանի, *hj.* **սարեակ** «մի թռչուն»<sup>16</sup>:

**եա** (*ea*)-ն առկա է նաև հունարենից փոխառված **փասեան** (< *φασιανός*) (մի տեսակ թռչուն), **սեպեան** (< *σηπία*) (ձուկ), **սկալինեան** (< *σκαληνός*) (եռանկյուն) բառերում: Առաջին երկուսում **եա**-ի հունական համարժեքն է *ια* (/իա)-ն: Ըստ այդմ՝ դրանցում արդեն հայերենյան փուլում **ա** (*a*)-ին նախորդող դիրքում տեղի է ունեցել հուն. *i*

13 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, էջ 8:  
 14 Տե՛ս **Мещанинов И.**, Грамматический строй урартского языка, М.-Л., 1958, էջ 26-27, **Меликишвили Г.**, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 47, **Սույնի՝** Урартский язык, М., 1964, էջ 23-24, **Джаукян Г.**, Урартский и индоевропейские языки, Ер., 1963, էջ 12, **Дьяконов И.**, Языки древней Передней Азии, М., 1967, էջ 124, ծնթ. 18, **Хачикян М.**, Хурритский и урартский языки, Ер., 1985, էջ 30, 33-34:  
 15 **Պատեան**-ը բաղադրություն է **պատ** «1. չորս կողմը, շրջան, պտույտ. 2. որմ, պատ, պատում, փաթաթում» արմատից: Հ. Աճառյանը **պատ** բառը թողել է չստուգաբանված (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. IV, էջ 32-34): Ըստ Գ. Ջահուկյանի **պատ**-ն իրանական փոխառություն է (հմմտ. սողդ. *pat* «անգամ» < *h.-ե.* \**pet-* «տապալել, թռչել, ընկնել») (տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 623):  
 16 Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. IV, էջ 187: Ըստ Գ. Ջահուկյանի *hj.* **սարեակ** ձևն առաջացել է իրան. *sārīk*-ի «*-ik*-ի վերափոխմամբ **-եակ**-ի» (**Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 671: Հմմտ. նաև **Վրոբշման Հ.**, նշվ. աշխ., էջ 236):

(i) > hj. **ե** (e) հնչյունական (իմա՝ հնչույթային) անցում: Ինչ վերաբերում է **սկալիներան** բառին, հազիվ թե **եա**-ն լինի հունական o-ի համարժեքը: Ավելի հավանական է, որ **-եան** վերջը բառին ավելացել է համաբանական ազդեցությամբ՝ դուրս թողնելով հունական -օզ-ը, ինչպես որ տեղի է ունեցել **փասեան** (< φασιανός) բառի դեպքում:

Վերոհիշյալ օրինակների ճնշող մեծամասնության դեպքում, լինեն դրանք հավաստի, թե դեռևս վիճելի ստուգաբանությամբ, ակնհայտ է, որ **եա** երկբարբառի առաջացումն **ի** > **ե** հնչյունափոխության արդյունք է՝ **ա** (a) ձայնավորին նախորդող դիրքում: Իրանական մի քանի փոխառություններում, ըստ ամենայնի, կիսաձայն y (/j)-ն է վերածվել **ե** (e)-ի, բայց դարձյալ **ա** (a)-ից առաջ: Իսկ y (/j)-ն համարվում է i-ի լծորդակից հնչյունը առնվազն հնդեվրոպական լեզուներում և ընդհանուրինդեվրոպականում<sup>17</sup>: Ըստ իս՝ **լեան** (< \*kleitno-) բառի կազմում նույնպես տեղի է ունեցել i > e անցում a (ա)-ից առաջ՝ ընդհանուր առմամբ որպես հետևյալ զարգացումների արդյունք. 1) \*t-ի անկում, 2) վանկարար \*r-ի վերածում թերևս նախ՝ **ար** (ar)-ի, ապա՝ **-ն** (-n) ձայնորդի առնմանական ազդեցությամբ՝ **ռ** (r)-ի<sup>18</sup>, 3) a (ա)-ից առաջ i > e հնչյունափոխություն և կրկնակ եե-երի առաջացում, որոնք նախ՝ կարող էին տալ երկար ē, ապա՝ վերջինի քանակական կրճատման հետևանքով՝ կարճ e, որովհետև e-ն a (ա)-ի հետ կազմել է երկբարբառ, իսկ երկբարբառն ունի սովորական ձայնավորից երկար արտաբերություն: Բնականաբար, նախահայերենի վաղ փուլերից մեկում ընկել է նաև h.-ե. նախաձևի բառակզրի քմայնացած հետնալեզվային խուլ հպականը՝ \*k-ն:

Հասկանալի է, որ այս բացատրությունն անվերապահ բնույթ չունի, բայց կարծում ենք՝ հնչյունափոխական գործընթացներն ունեցել են մեր նկարագրածին մոտ ընթացք: Հետևաբար կարելի է բավականին մեծ վստահությամբ ասել, որ **եա** (ea) երկբարբառն առավելապես ներհայերենյան զարգացումների արդյունք է, և այդ գործընթացը պիտի ավարտված լիներ նախքան գրերի գյուտը՝ 5-րդ դ. սկիզբը:

17 Հմմտ. «\*Y-ն և \*w-ն \*i-ի և \*u-ի բաղաձայնական ձևերն են» (Meiße A., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, с. 130):

18 Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի **ր** (r), **ռ** (r) նայականների և **մ** (m), **ն** (n) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը, «Հայագիտության հարցեր», Եր., 2018, N 1, էջ 140-142:

**Էա** (ēa) երկբարբառը հանդիպում է. 1) իմաստաբանական ընդհանուր դաշտի վերաբերող սակավաթիվ բառերի կազմում՝ որպես սկզբնաբաղադրիչ կամ բարդության առաջին բաղադրիչ (հմմտ. **էակ**, **էական**, **էակից**, **էանալ**, **էապէս** և այլն). 2) **ե** և **ի** լծորդության բայերի անց. անկ. ժ. հզն. թ. 1-ին դեմքի ձևում (հմմտ. **աշխարէաք** (աշխարեմ-ից «ողբալ, սգալ»), **գիտէաք** (գիտեմ-ից «իմանալ. ճանաչել»), **կարգէաք** (կարգեմ-ից «կարգի բերել. նշանակել»), **վարժէաք** (վարժեմ-ից «վարժեցնել. կրթել»), **դատէաք** (դատիմ-ից «դատ անել. դատապարտել»), **նստէաք** (նստիմ-ից «բազմել. հեծնել»), **ունէաք** (ունիմ-ից «ունենալ. տեր լինել») և այլն). 3) հունական մի քանի փոխառություններում (հմմտ. **թէատրոն** «թատրոն», **թէատրիկոն** «դերասանուհի», **մորէաս** «թուր», **Անդրէաս**):

Առաջին կարգի բառերում **էա**-ի հիմքային բաղադրիչն է **է**-ն՝ «գոյակ, գոյություն ունեցող» նշանակությամբ, իսկ **ա**-ն՝ 1) **-ակ**, **-ական**, **-անալ** վերջածանցների սկզբնաբաղադրիչ է **էակ**, **էական**, **էականալ** «բնական լինել», **էականութիւն**, **էանալ** «գոյանալ, գոյավորվել» բառերում, 2) հոդակապ է մյուսներում՝ **էակից** «գոյակից», **էապէս** «ըստ էության» և այլն:

Բայերի անց. անկ. հզն. թ. 1-ին դ. ձևում **է**-ն ունի նույն ծագումը, ինչ որ **էի** (ēi) երկբարբառի **է**-ն այդ նույն ժամանակի մյուս ձևերում (տե՛ս ստորև):

Հունական փոխառություններում առկա է հուն. *εα* (/έα) > *hj*. **էա** (ēa) համապատասխանությունը (հմմտ. **թէատրոն** < հուն. *Θέατρον*, **թէատրիկոն** < հուն. *Θεατρικόν*, **մորէաս** < հուն. *μορέα*, **Անդրէաս** < հուն. *Ἀνδρέας* «բուն նշանակությամբ «առնական»»<sup>19</sup>): Հունարենագիտության մեջ ընդունված պատկերացման համաձայն *εα* (/έα)-ն երկբարբառ չէ, այլ ձայնավորական հնչյունակապակցություն: Հուն. կարճ *ε/έ* (*e/é*) > *hj*. երկար **է** (ē) անցումը, ինչպես կտեսնենք նաև մյուս երկբարբառների առնչությամբ, սովորական երևույթ էր, հատկապես շեշտված դիրքում, որովհետև շեշտված կարճ ձայնավորը տևողությամբ գրեթե հավասար է երկարին:

19 Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, Եր., 1942, էջ 159: Հասարակ անունները ըստ Աճառեան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 17, 24: Գ. Ջահուկյանի դիտարկմամբ այդ բառերն ուշ շրջանի փոխառություններ են, որովհետև չեն հանդիպում 5-րդ դ. մատենագրության մեջ, ուստի նա դրանք դուրս է թողել իր կազմած ցանկից (տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ Ջահուկյան Գ., ՀԼԳՆԺ), Եր., 1987, էջ 617-621):

Կարծում ենք՝ հյ. **էա** (ēa)-ի առաջացման հարցում կարևոր են հատկապես առաջին երկու կետերում ներկայացված իրողությունները, որովհետև հունական մի քանի փոխառությունները, ընդ որում՝ հիմնականում կատարված 5-րդ դարից հետո, հազիվ թե էական դեր ունենային **էա** երկբարբառի կազմավորման գործընթացում: Հետևաբար. 1) իբրև երկբարբառային կազմություն՝ **էա** (ēa)-ն պիտի համարել հայերենի ներքին զարգացումների արդյունք, 2) ըստ ամենայնի՝ այն ձևավորվել է նախքան 5-րդ դարը, որովհետև առաջին երկու կետերում տեղ գտած իրողությունները նույնպես վերաբերում են հայերենի նախագրաբարյան փուլին:

**էի** (ēi) երկբարբառը միակն է, որը կարող էր անմիջականորեն սերած լինել հ.-ե. երկբարբառային համակարգից, որովհետև ընդհանուրինդեվրոպական լեզվում վերականգնվում է այդպիսի երկբարբառ՝ \*ei<sup>20</sup>: Գրաբարի քերականություններում **էի** (ēi)-ն ներկայացված է բացառապես հին հայերենի **ե** և **ի** լծորդությունների բայերի անցյալ անկատարի վերջավորությունների կազմում (մտ. **բերէի** «(ես) բերում էի», **դնէին** «(նրանք) դնում էին», **շարժէիր** «(դու) շարժում (/ շարժվում) էիր», **արկանէիր** «(դուք) նետում (/ նետվում) էիք», **հայէի** «(ես) նայում էի» և այլն): Հին հայերենի երկբարբառային կազմությունների համաժամանակյա քննության վերաբերյալ մեր վերջին աշխատանքում նշել ենք, որ **-էի** (ēi)-ի՝ իբրև անցյալ անկատարի վերջավորության մասին հայերենագիտության մեջ տեղ գտած տեսակետներից մեկի համաձայն այն ուշգրաբարյան երևույթ է, իսկ անկատարի հնագույն վերջավորությունը **-եի** (ei)-ն էր<sup>21</sup>: Այդպիսի կարծիք են հայտնել մասնավորապես Ա. Մեյեն և Հ. Աճառյանը, այն պաշտպանել է նաև Թ. Ղարազյուլյանը<sup>22</sup>: Ըստ Է. Աղայանի և Գ. Զահուկյանի,

20 Ըստ Օ. Սեմերենյիի հիմք-լեզվում երկար հիմնական ձայնավորով երկբարբառները «հանդիպում են գրեթե բացառապես հոլովական վերջավորություններում...» (Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 54):

21 Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի երկբարբառային և եռբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա քննություն), էջ 57-67:

22 Տե՛ս Meillet A., նշվ. աշխ., էջ 126-127, **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼԹՀԼ), հատ. IV, գ. Ա, Եր., 1959, էջ 366 (հմմտ. Ачарян Р., Имперфект в древнеармянском и некоторых индоевропейских языках, «Доклады и сообщения», т. IV, М., АН СССР, Институт языкознания, 1953, էջ 85-90), **Ղարազյուլյան Թ.**, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Եր., 1961, էջ 129-145:



ընդհակառակը, անցյալ անկատարի վերջավորության **-էի** (ēi)-ն նախնական է<sup>23</sup>: Այս տեսակետին հարել է նաև Ս. Գյուլբուդադյանը<sup>24</sup>:

Այս առնչությամբ պիտի նկատի ունենալ, որ **հին հայերեն** > **միջին հայերեն** անցմանը բնորոշ էր **է** (ē) > **ե** (e) հնչյունափոխությունը՝ որպես քանակական կրճատում, այն է՝ երկար ձայնավորի անցում կարճի<sup>25</sup>: Հազիվ թե նախագրային փուլում, մասնավորապես հայերենի քերականական համակարգի ձևավորման շրջանում, որից գրաբարյան հայերենին բաժանել է առնվազն երկու հազարամյակ, գործել է հակառակ միտումը<sup>26</sup>: Հետևաբար **ե** (e) > **է** (ē) անցում ենթադրելն առհասարակ հակասում է լեզվում դրսևորված հնչյունափոխական (իմա՝ հնչույթափոխական) ընդհանուր միտումին, անկախ այն բանից, թե լեզվական ինչպիսի բաղադրիչի կազմում է հանդիպում:

Ըստ իս՝ առավել հավանական է հիմնախնդրի ջահուկյանական մեկնաբանությունը: Ակադ. Գ. Զահուկյանը հնարավոր է համարել հին հայերենի անցյալ անկատարի (imperfect tense / имперфект) հիմքի ծագումը **հ.-ե.** *ըղձական եղանակից* (optative / оптатив), որովհետև անկատարն իրականացրել է նաև *ստորադասական* (subjunctive mood / конъюнктив) անցյալի գործառույթ՝ *ըղձականի նշանակությամբ*: Իսկ ստորադասականի հիմքն իր հերթին կազմվել է **հ.-ե.** *ըղձականի* հիման վրա: Ըստ այդմ՝ **\*oi-**-ն, որը մասնակցել է **հ.-ե.** անկատարի հիմքի կազմավորմանը, հայերենում հնչյունափոխվել է **-է** (ē)-ի, սրան էլ ավելացել է անցյալի բուն վերջավորությունը՝ **-ի** (-i) (հմնտ. **հ.-ե.** **\*b<sup>h</sup>eroi-** > **hj.** բեր**է-ի** «(ես) բերում էի»)<sup>27</sup>:

23 Տե՛ս **Սդայան Է.**, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 358-359, **Джаукян Г.**, Сравнительная грамматика армянского языка, էջ 187, 230 ծնթ. 63:  
 24 Տե՛ս **Գյուլբուդադյան Ս.**, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 41-42:  
 25 Տե՛ս **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1954, էջ 256, **նույնի** Միջին հայերեն, գ. Ա, Եր., 1960, էջ 144-145, «Ակնարկներ միջին գրական հայերենի», հատ. Ա, Եր., 1972, էջ 64-67, **Վարստ Յո.**, Վիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 27-28:  
 26 Տե՛ս **Порциг В.**, Членение индоевропейской языковой области, М., 1964, էջ 117, **Джаукян Г.**, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 325-326, 330:  
 27 Տե՛ս **Джаукян Г.**, Сравнительная грамматика армянского языка, էջ 187: Հմնտ. նաև **Мейе А.**, նշվ. աշխ., էջ 247, 260, **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 275-276 («Բնավոր բայերի երկրորդային վերջավորությունից առաջ հանդես է գալիս **-oi-** բաղադրիչը, որը, ինչպես կարելի է կարծել, բաղկացած է բնի օ ձայնավորի տեմբրային այլ աստիճանից և անբուն **yē/i-**ի գրոյական աստիճանից: Կազմությունը կարելի է վերականգնել հունարենի, գոթերենի և իին հնդկերենի հիման վրա» (նույն տեղում)): Հին հայերենի բայի, մասնավորապես **ե** և **ի** լծորդությունների բայերի անցյալ անկատարի վերջավորությունների ծագման հարցը եղել է բազմաթիվ հնդեվրոպաբանների ուշադրության կենտրոնում՝ սկսած 19-րդ դ. 60-ական թթ. (Ֆ. Բոպպ) մինչև անցյալ՝ 20-րդ դ. 80-ական թթ.՝ ավելի քան 120 տարի: Առաջադրված վարկածների մասին, արդեն հիշատակված աշխատություններից բացի, տես նաև **Джаукян Г.**, Сравнительная грамматика армянского языка, էջ 230, ծնթ. 63:

Անցյալ անկատարի վերջավորության մեջ է (ē)-ի նախնականության անուղղակի վկայություններ են նաև հ.-ե. \*oi (/ \*ei)<sup>28</sup> > հյ. է (ē) հնչյունափոխության բազմաթիվ այլ օրինակներ, որոնք արտացոլում են արմատի մեջ տեղի ունեցող նույնաբնույթ գործընթացը (հմմտ. \*uoid- (/ \*ueid-) > (հյ. գէտ- >) գիտ-եմ «իմանալ», \*g<sup>h</sup>oi-ro- > գէր (?), \*k<sup>h</sup>oi-nā- > բէն «ոխ, վրեժ, նախանձ», \*toig<sup>h</sup>-no- > \*թէկն (> թեկն) «մեջք, կրնակ», \*dheig<sup>h</sup>o-s > դէգ, \*eik<sup>h</sup>o-s > էշ (-յ) և այլն):

Նկատի ունենալով, որ էի (ēi)-ն հանդես է գալիս միայն խոնարհման համակարգում՝ իբրև վերջավորության բաղադրիչ, կասկածից վեր է, որ այն կազմավորվել է նախագրաբարյան փուլում, ընդ որում՝ ոչ թե մ.թ. առաջին դարերում, այլ շատ ավելի վաղ, երբ հայերենը, ընդհանուրինդեվրոպական լեզվից առանձնանալուց հետո, ձևավորվում էր իբրև ինքնուրույն լեզու: Սահմանել էի (ēi)-ի և առհասարակ հայերենի խոնարհման մասնիկների կազմավորման որոշակի ժամանակ՝ նույնն է, թե խոսել հայերենի խոնարհման համակարգի կազմավորման ժամանակաշրջանի մասին: Նկատի ունենալով համեմատական հնդեվրոպաբանության մեջ առհասարակ այդօրինակ գործընթացների առնչությամբ արտահայտված տեսակետները<sup>29</sup> կարելի է ենթադրել, որ դրանք ավարտվել են ոչ ուշ, քան մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբին:

Էո (ēo)-ն հանդիպում է գերազանցապես փոխառյալ անձնանունների մեջ (հմմտ. **Բարթողիմէոս, Գեղէոն, Գէորգ, Թաղէոս, Թէոդորոս, Թէոփիլոս, Թէոֆանաւ (Թէոֆանո), Մատթէոս, Սերէոս, Սիմէոն, Տիմոթէոս**), իսկ հասարակ անուններից՝ միայն փոխառյալ **լեզէո(վ)ն** «հռոմեական ստորաբաժանում. հռոմեական զինվոր» բառի կազմում: Նշված անուններից ութը՝ **Գէորգ, Թաղէոս, Թէոդորոս, Թէոփիլոս, Թէոֆանաւ, Մատթէոս, Սերէոս, Տիմոթէոս**, ունեն հունական, իսկ երեքը՝ **Բարթողիմէոս, Գեղէոն, Սիմէոն**, երբայական ծագում, սակայն վերջինները նույնպես հայերենին անցել են հունարենի միջոցով, հետևաբար հունական գրադարձությամբ, ըստ այդմ՝ պիտի դիտարկվեն հուն. > հյ. փոխառությունների տրամաբանության

28 Որպես բնի ծայնավոր՝ հ.-ե. \*o-ն կարող էր հերթագայվել \*e-ով (ծայնդարձի լրիվ կամ որակական աստիճան) (տես Савченко А., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 144, Семереньи О., նշվ. աշխ., էջ 96-97):

29 Տես Порциг В., նշվ. աշխ., էջ 117, 330, Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, էջ 325-326, 330:

մեջ (հուն. **Բարթողիմէոս** < հուն. Βαρθολομαῖος «որդի Թուլմէի»<sup>30</sup>, **Գեղէն** < հուն. Γεδεών (< երբ. Gid‘ōn (< gd‘ «խորտակել, ջախջախել» արմատից))<sup>31</sup>, **Գէորգ** < հուն. Γεώργος «երկրագործ»<sup>32</sup>, **Թաղէոս** < հուն. Θαδδαῖος՝ ըստ ասորական «իմաստուն» նշանակության<sup>33</sup>, **Թէոդորոս** < հուն. Θεόδωρος «աստվածանվեր» (կազմված է Θεός «Աստված» + δῶρον «նվեր» բառերից)<sup>34</sup>, **Մատթէոս** < հուն. Ματθαῖος «1. պարգև. 2. երգ կենսաց»<sup>35</sup>, **Սեբէոս** < հուն. Εὐσέβιος «բարեպաշտ» (կազմված է εὐ «բարի» + σέβομαι «պաշտել, երկրպագել» բառերից)<sup>36</sup>, **Սիմէոն** < հուն. Συμεών (< երբ. Šim‘on «լսող» (< šm‘ «լսել, հնազանդվել» արմատից))<sup>37</sup>, **Տիմոթէոս** < հուն. Τιμόθεος «աստվածահարգ, աստվածապատիվ»<sup>38</sup>։

**Լեզն(վ)ն**-ը լատիներեն բառ է, բայց հայերենին անցել է դարձյալ հունարենի միջոցով (հուն. **լեզն(վ)ն** < հուն. λεγών (< լատ. legio-, -onis))<sup>39</sup>։

Վերը նշված անուններում հյ. **էն**-ն ունի հուն. εώ, εο (/εό), ιο և αῖο համարժեքները։ Հին հունարենում εώ, εο և ιο տիպի երկբարբառներ՝ ո՛չ «իսկական» (собственный) և ո՛չ էլ «անիսկական» (не собственный)<sup>40</sup>, նույնպես չեն տարբերակվում։ Եռաբարբառի տարբերակման մասին խոսք անգամ չկա, հետևաբար αῖο-ն կարող էր լինել, օրինակ, «αῖ (երկբարբառ) + ο (ձայնավոր)» հաջորդականություն, որտեղ ο-ն հունական անձնանուններին բնորոշ -ος վերջավորության բաղադրիչն է։ Այն, որ հունարենի ինչպես երկար ω-ն, այնպես էլ կարճ ο-ն, հին հայերենում արտաբերվել են իբրև կարճ **ո** (օ), հասկանալի է. հայերենը չէր պահպանել հնդեվրոպական հինք-լեզվին և հ.-ե. հին լեզուներից շատերին (հին հունարեն, լատիներեն, հին սլավոներեն,

30 Տես **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 387-388։

31 Տես նույն տեղում, էջ 451։

32 Տես նույն տեղում, էջ 454։

33 Տես **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, Եր., 1944, էջ 244։

34 Տես նույն տեղում, էջ 296։

35 Տես **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, Եր., 1946, էջ 218։

36 Տես **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, Եր., 1948, էջ 471։

37 Տես նույն տեղում, էջ 167։

38 Տես **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 5, Եր., 1962, էջ 154։

39 Տես **Ջահուկյան Գ.**, ՀԼՊՍԺ, էջ 618։

40 Տես **Соболевский С.**, Древне-греческий язык, М., 1948, էջ 8, **Мейчен Дж. Г.**, Учебник греческого языка Нового Завета, М., 2002, էջ 8։ «Իսկական» և «անիսկական» տերմինները գործածում ենք հետևելով հունարենագիտության ավանդույթին, այլապես այդ տերմինները մեզ համար ընդունելի չեն (տես **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հարցի շուրջ (համաժամանակյա հայեցակերպ), էջ 57-67), որովհետև «անիսկական» նշանակում է «կեղծ, գոյություն չունեցող»։ Իրականում խոսքը երկբարբառին բնորոշ հատկանիշներից մասնակի շեղումների կամ դրանց ոչ լիարժեք առկայության մասին է։

հնդիրանական լեզուներ, կելտական լեզուներ և այլն) բնորոշ՝ ձայնավորների քանակական՝ կարճի և երկարի հնչույթային տարբերությունը<sup>41</sup>: Բացառություն էր միայն ե (e) ~ է (ē) հակադրությունը, որը թույլ տարբերակիչ գործառնություն գրերի գյուտի ժամանակ՝ 5-րդ դ. սկզբին, այն է՝ այդ հակադրությամբ տարբերակվում էին սակավաթիվ բառեր (հմմտ. **գետ**, -ոյ (< \*ǵedo- «խոնավացնել, հոսել») «գետ» ~ **գէտ** (սեռ. **գիտի**) (< \*ǵeid-/ǵoid- «իմանալ, գիտենալ») «գիտակ, տեղյակ», **խէթ** (/ **խեդ**) (< \*khait- «խփել, հրել») «խէթ, խոժոռ. ցավոս՝ տկար աչքով» ~ **խէթ** (սեռ. **խէթի** / **խիթի**) (< \*khait- «խփել, հրել»)՝<sup>42</sup> «խղճի խայթ. խոչընդոտ», **սէր** (< \*k'ēr- «աճել. սնել») «սերունդ, ցեղ, սեռ» ~ **սէր** (> **սիր**-(ել)) (< \*k'ēr-ro- \*k'ēr- «պառկել»)), և, ըստ ամենայնի, այդ տարբերությունը նույնպես երկար չի պահպանվել: Ինչ վերաբերում է հուն. io > hj. **էո** առնչությանը, ավելի հավանական է, որ այն **-ոս** վերջն ունեցող անձնանունների համաբանական ազդեցության արդյունք է, քան թե հունական անվան երկրորդ բաղադրիչի՝ σέβομαι «պաշտել, երկրպագել», երկբարբառային *αι-ի* մենաբարբառացումն է հայերենում, այսինքն՝ վերածվելը **է** (ē)-ի: Մանավանդ որ հունական բարդության մեջ արդեն իսկ երկբարբառային կառույցը պահպանված չէր:

Կարծում ենք՝ վերոշարադրյալը բավարար հիմք է տալիս ասելու, որ՝ 1) հին հայերենի **էո** (ēo) *ոչ կայուն* երկբարբառի առաջացումը պայմանավորված է հունական փոխառությունների իրողությամբ՝ որպես նշված ձայնավորական հաջորդականությունների՝ հայերենում կրած հնչյունափոխության արդյունք, 2) ըստ այդմ՝ **էո** (ēo)-ի առաջացումը վերաբերում է հայերենի գրաբարյան փուլին, որքանով այն գերազանցապես աստվածաշնչյան անունների գրադարձության արդյունք է հայերենում:

**Իա** (ia)-ն հանդիպում է. 1) բաղադրյալ կազմությամբ որոշ հայերեն բառերում, որոնց առաջին բաղադրիչն է **մի**-ն (հմմտ. **միաբան** «համաձայն. վանական», **միազոյ** «միաձույլ, միատարր», **միածին** «Քրիստոսի մակդիրը. մինուձար», **միակ** «1. մեկ. 2. եզակի, նմանը չու-

41 Հմմտ. **Ջահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 624:

42 Տե՛ս «Արժեքն բառարան հայկազնեան լեզուի» (այսուհետև՝ ԱԲՀԼ), Անթիլիաս, 1988, էջ 575: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը **խէթ** և **խէթ** արմատների համար նշում են ընդհանուր **խայթ** արմատային սկիզբը (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. II, Եր., 1973, էջ 325, 355, 361-362, **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 314, 325, 329), բայց արդեն գրաբարյան փուլում դրանք հեռացել էին իրարից նաև իմաստաբանորեն և ինքնուրույն բառեր էին:

նեցող», **միսկեաց** «մենակյաց, ձգնավոր», **միսպէս** «հավասարապես», **միստարր** «միօրինակ» և այլն), 2) հունական որոշ փոխառություններում (հմմտ. **դիսպուզ**, **դիսպուզոս** «տրամախտություն», **դիսկոն** «սարկավազ», **դիսասպր** (շորեղեն), **դիստոն** «ասուպ», **դիսփասաղմայ** «դադար», **թիսկոս** «խումբ» և այլն), 3) փոխառյալ հատուկ անուններում (հմմտ. **Ազարիս**, **Ամասիս**, **Եղիս**, **Զարարիս**, **Լիս**, **Ղուկիանոս**, **Մարիսա**, **Ողինպիսդայ**, **Սուքիաս** և այլն)<sup>43</sup>:

Բառակազմական առումով առաջին կարգի բառերը՝ հասարակ անունները, հիմնականում բաղադրյալ են, իսկ **իս**-ի **ա**-ն ունի հոդակապի գործառույթ: **Միակ** բառում **ակ**-ը երկարժեք ածանց է. կերտում է գոյական՝ 1-ին նշանակությամբ՝ իբրև **մեկ** թվականի անվանում, և ածական՝ 2-րդ՝ գոյականի հատկանիշի նշանակությամբ: Անկախ այդ բառերի ծագումից, այն է՝ հայերենում բնիկ են, թե փոխառյալ, դրանցում **իս**-ն զուտ հայերենյան բառակազմական գործընթացների արդյունք է:

Հունական փոխառություններում առկա է *ιά* (/ia) > **իս** (ia) համապատասխանությունը. **դիսպուզոս** < հուն. *διάλογος*, **դիսկոն** < հուն. *διάκονος*, **դիսասպր** < հուն. *διάσπρος*, **դիստոն** < հուն. *διάττων*, **դիսփասաղմայ** < հուն. *διάψαλμα*, **թիսկոս** < հուն. *θίασος*:

Փոխառյալ հատուկ անունների մեջ կան ինչպես երբայական ծագման (հմմտ. **Ազարիս** < երբ. *‘Azariāh* (< ‘zr «օգնել» և *Yāh* «Եհովա» բառերից) «օգնութիւն Աստուծոյ»<sup>44</sup>, **Ամասիս** < երբ. *Amasyāh* (< *ams* «զորավոր» + *Yāh* «Եհովա» բառերից) «աստուածագոր կամ զորութիւն Աստուծոյ», **Եղիս** < երբ. *Eliyyā* (*el* «աստված» + *Yāh* «Եհովա» բառերից) «Եհովան է իմ Աստուած»<sup>45</sup>, **Զարարիս** < երբ. *Zākharīyā* (< *zkh* = արար. *zikh* «հիշել» արմատից) «յիշատակ Տեառն»<sup>46</sup>), այնպես էլ հունական ծագում ունեցող կամ էլ հունական գրադարձությամբ հայերենին անցած անուններ (հմմտ. **Ղուկիանոս** < հուն. *Λουκιανός* «լուսավոր» (լատ. *Lucianus*՝ *lux* «լույս» բառից)<sup>47</sup>, **Լիս** < հուն. *Λεία* (< երբ. *Leā* «հոգնած»), **Մարիսա** < հուն. *Μαριάμ* (< երբ. *Maryām* կամ *Mirām* «լուսավոր-

43 Հ. Աճառյանի ցանկում հաշվվում է **իս** երկբարբառն ունեցող շուրջ 80 փոխառյալ հատուկ անուն (տե՛ս **Աճառյան Հ.**, ԼԲՀԼ, հատ. 3, Եր., 1957, էջ 470-486):

44 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 54-55:

45 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 103-104:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 177:

47 Տե՛ս **Զահուկյան Գ.**, ՀԼՊԼԺ, էջ 623:

յալ»)՝<sup>48</sup>, **Ողիմպ/հադայ** < հուն. Όλυμπιάς «Ողիմպոս լեռան վրա բնակվող նիմֆա»<sup>49</sup>, **Սուրբ/սա** < հուն. Ἅγιος «հանդարտ, խաղաղ»<sup>50</sup>): Նշված հատուկ անուններում հյ. **իա**-ի համարժեքներն են երբ. iā, yā, iyyā, iyā և հուն. ια, (ε)ία, ιά, ιο հնչյունակապակցությունները, ըստ էության՝ i(/y)a / io-ն: Օտար լեզվի a > հյ. **ա** (a), մասնավորապես հուն. i/y > հյ. **ի** (i) անցումները դիտարկվել են բազմաթիվ օրինակներում<sup>51</sup>, ուստի դրանք կարելի է համարել օրինաչափական<sup>52</sup>: Ինչ վերաբերում է հուն. ο > հյ. **ա** (a) անցմանը, ապա այդ «շեղումը», ըստ երևույթին, տեղի է ունեցել կա՛մ ժողովրդական ստուգաբանության, կա՛մ էլ նմանատիպ այլ օրինակների համաբանական ազդեցության պատճառով:

Կազմավորման առումով **իա** (ia)-ն միատարր չէ, և դժվար է ասել, թե հատկապես որ բաղադրիչն է ավելի մեծ դեր ունեցել այդ երկբարբառի ձևավորման գործում՝ փոխառյա՞լը, թե՞ հայկականը՝ որպես «ի + ա» կառույց: Մասնավաճառ որ դժվար է որոշել, թե երբ են կազմավորվել «մի + ....»-ով բաղադրությունները՝ նախքա՞ն 5-րդ դարը, թե՞ դրանից հետո: Պայմանականորեն այդ երկբարբառի կազմավորման ժամանակ կարելի է սահմանել 5-րդ դարի սկիզբը՝ նկատի ունենալով, որ դրա ձևավորման գործում մեծ է եղել փոխառությունների տեսակարար կշիռը:

**Իե** (ie)-ն հանդիպում է բաղադրյալ կազմություն ունեցող սակավաթիվ բառերում (հմտ. **միեղէն** «միակ, եզակի», **միեղինաբար** «եզակի կերպով, միօրինակ», **միեղինություն** «միեղեն՝ եզակի լինելը», **միեղջերու** (-ուի) / **միեղջիւր** (-րի) «հնդկական ճագեղջյուր» և այլն): Բառերի կազմությունից իսկ ակնհայտ է, որ **իե**-ն բարդության առաջին՝ **մի** «մեկ», բաղադրիչի **ի** (i)-ի և երկրորդ բաղադրիչի **ե** (e) սկզբնահնչյունի միացություն է: Որպես երկբարբառ՝ **իե**-ն հայերեն-

48 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 3, էջ 249:

49 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, էջ 185: **Նիմֆա**. «1. Հունական դիցաբանության մեջ բնության զանազան ուժերը մարմնացնող կանացի կերպարանքով աստվածություն» (**Սիլայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1976, էջ 836), այլ կերպ՝ հավերժահար:

50 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, էջ 591: Ըստ Հ. Աճառյանի՝ «ձիշտ տառադարձությամբ պիտի լիներ **Հայոցիոս**» (նույն տեղում):

51 Ըստ էության, երբայական ծագման հատուկ անունների հայկական արտացոլումները նույնպես հունական գրադարձության արդյունք են, որովհետև այդ բոլոր անունները կամ առնվազն դրանց մեծ մասը հայերենին անցել են Ս. Գրքի (Աստվածաշունչ) թարգմանությամբ, իսկ Ս. Գրքի թարգմանությունը կատարվել է նախ՝ ասորերեն, ապա՝ հին հունարեն թարգմանությունից (տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 59):

52 Հմտ. **Ջահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 624-626:

յան իրողություն է, անկախ նրա բաղադրիչների ծագումնաբանությունից, որովհետև նշված բարդությունները՝ որպես այդպիսին, կազմավորվել են հայերենում:

Ըստ ամենայնի՝ **իե** երկբարբառն ունեցող բարդությունների առնվազն մի մասը կար արդեն նախագրաբարյան փուլում:

**իէ** (iē) երկբարբառը հանդիպում է. 1) փոխառյալ հատուկ անունների կազմում (հմմտ. **Ադրիէ**, **Անանիէ**, **Գաբրիէ**, **Դանիէ**, **Եգեկիէ**, **Լիէս** և այլն)<sup>53</sup>, 2) **ապրիէ** ամսանվան մեջ<sup>54</sup> և 3) **Իզնատիոս** հատուկ անվան կոչականի ձևում՝ **Իզնատիէ**<sup>55</sup>: Նշված փոխառյալ հատուկ անուններից ստուգաբանված են 3-ը (հմմտ. **Գաբրիէ** < եբր. Gabriel (< եբր. geber «մարդ, տղամարդ») «այր Աստուծոյ»<sup>56</sup>, **Դանիէ** < եբր. Dāniel «դատաւոր իմ Աստուած»<sup>57</sup>, **Եգեկիէ** < հուն. Ιεζέκιλ (< եբր. Yehezqel (< եբր. hzq «հաստատուն, ուժեղ, գորատր») + ēl «Աստուած» բառերից)<sup>58</sup>): Ըստ այդմ՝ **իէ** երկբարբառն ունի եբր. īe, ie և հուն. ιη (iē) համարժեքները, որոնցից հայերենի ձևին ձշտորեն համապատասխանում է հունականը: Իհարկե, եբրայականները ևս խնդրահարույց չեն, որովհետև՝ 1) փոխատու (տվյալ դեպքում՝ եբրայերեն, հին հունարեն) լեզվի երկար ī-ն օրինաչափորեն հայերենում պիտի տար կարճ i, որովհետև հայերենը չուներ երկար ī հնչույթ, 2) ինչպես եբրայական, այնպես էլ հունական երկար ē-ն և կարճ e-ն հայերենում տալիս էին թե՛ կարճ **ե** (e), թե՛ երկար **է** (ē)<sup>59</sup>: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք **իա** (ia) երկբարբառի առնչությամբ, եբրայական անունները հիմնականում հայերենին անցել են հունարենի միջանկյալ աստիճանով, այլ կերպ՝ հունական գրադարձությամբ և ենթարկվել են **հունարեն** > **հայերեն** անցման օրինաչափությամբ:

Եթե նկատի ունենանք, որ վերոհիշյալ հատուկ անունները հայերեն մուտք են գործել առավելապես Ս. Գրքի թարգմանության միջոցով, ավելի հավանական է, որ **իէ** (iē) երկբարբառի կազմավորումը վերաբերում է գրաբարյան հայերենի սկզբնափուլին:

53 < Աճառյանի ցանկում հաշվվում է **իէ** երկբարբառն ունեցող 17 անուն (տես **Աճառյան Հ.**, ԼԲՀԼ, էջ 470-486), որոնցից, սակայն, գործածական են եղել հատկապես մի քանիսը:

54 «Հռոմեական տոմարի չորրորդ ամիսը»՝ **ապրի**: Հանդիպում է նաև **ապրիէ** տարբերակով (տես **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հատ. 1, Եր., 1971, էջ 243. հմմտ. նաև «Նոր բառգիրք հայկազգան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հատ. 1, Եր., 1979, էջ 279, ԱԲՀԼ, էջ 107):

55 Տես **Արրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 26:

56 Տես **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 426:

57 Տես **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 10:

58 Տես նույն տեղում, էջ 95-96:

59 Հմմտ. **Ջահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 624:

**Իո** (io) երկբարբառը հանդիպում է բացառապես հունական փոխառությունների կազմում. 1) հատուկ անուններում, ընդ որում՝ ինչպես անձնանուններում (հմմտ. **Ակակ(իսու)**, **Ամբրոսիսու**, **Անտիոքոսու**, **Ատելփիսու**, **Արկադիսու**, **Բասիլ(իսու)**, **Գենարեթիսու**, **Դիոնեսիսու**, **Դիոսկորոսու**, **Եթադիսու**, **Եսեբիսու**, **Եստաբիսու**, **Իզնատիսու**, **Մերկեռիսու**, **Սրապիոն** և այլն), այնպես էլ տեղանուններում (հմմտ. **Անտիոք**, **Սիոն**), 2) հասարակ անուններում (հմմտ. **բրաբիոն** «ծաղիկ. մրցանակ», **Էլիսու** «արեգակ», **կապելիոն** «գինետուն», **սարդիոն** «մի տեսակ թանկագին քար», **ունիովն** (քար), **պիտիոն** «ատրուշան», **սինեդրիոն** «ժողով», **տաքսիոս** «հետևակ զինվորներ», **տպագիոն** «մի թանկագին քար» և այլն):

Անձնանուններում նկատվում են հետևյալ համապատասխանությունները. **Ակակիսու** < հուն. Ἀκάκιος «անմեղ» (կազմված է α բացասականով՝ κακός «չար, վատ» բառից)<sup>60</sup>, **Անտիոքոսու** < հուն. Ἀντίχος «նա, որ իր կառքը քշում է թշնամու կառքի դեմ. կառքի ոսիս» (կազմված է ἀντί «դեմ, հակառակ» և ὄχος «կառք» բառերից)<sup>61</sup>, **Բասիլ(իսու)** < հուն. Βασίλειος «թագավոր. թագավորական»<sup>62</sup>, **Դիոնեսիսու** < հուն. Διονύσιος (< Διονύσος՝ «գինու աստվածը՝ Բարոս» անունից. մեկ այլ մեկնությամբ՝ «աստվածազդեցիկ»)<sup>63</sup>, **Դիոսկորոսու** < հուն. Διόσκορος «աստվածորդի, Զևսի որդին»<sup>64</sup>, **Եթադիսու** < հուն. Εὐθάλιος «լավ ձյուղեր արձակած» (կազմված է εὖ «լավ» և θάλια (/θαλλία/θαλός) «նրածիլ ձյուղ» բառերից)<sup>65</sup>, **Սրապիոն** < հուն. Σεραπίων («ավելի լավ՝ Σαραπίων անունից, որ ծագում է հույն.-եգիպտ. Σέραπις, Σάραπις աստծու անունից»<sup>66</sup>):

Տեղանուններից **Անտիոք**-ի հարցը պարզ է՝ նույնն է, ինչ որ **Անտիոքոսու**-ի դեպքում: **Սիոն**-ն ունի երբայական ծագում, բայց, ինչպես անձնանունները, այս տեղանունը ևս, ըստ ամենայնի, հայերենին անցել է Ս. Գրքի միջոցով, հետևաբար՝ հունական գրադարձությամբ (հմմտ. **Սիոն** < հուն. Σίον (< եբր. **Տիոն** (այն բլուրը, որի վրա գտնվում է Երուսաղեմը))):

60 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 87, **Զահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 622:

61 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 173, **Զահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 622:

62 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, էջ 383, **Զահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 622:

63 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 70:

64 Տե՛ս **Զահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 622:

65 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, էջ 148, **Զահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 623:

66 Տե՛ս Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. 4, էջ 680:



Փոխառյալ հասարակ անուններում ընդհանուր առմամբ առկա են նույն համապատասխանությունները, ինչ որ հատուկ անունների դեպքում (հմնտ. բրաբր/հոն < հուն. βραβεῖον, էլ/հոս < հուն. ἔλιος, կապել/հոն < հուն. καπηλῖον, ուն/հովն < հուն. ὠνῶν, պիտ/հոն < հուն. πυρῆιον, սարդ/հոն < հուն. σάρδιον, սինեդր/հոն < հուն. συνέδριον, տաքս/հոտ < հուն. ταξιότης, տպագ/հոն < հուն. τοπάζιον):

Ըստ նշված երկու կարգի փոխառությունների՝ հյ. իո (io)-ի համարժեքներն են հուն. ειο (/εῖο)-ն, ւ-ն, ւո (/ւօ/ւօ/ւօ)-ն և ւօ (/ւօ)-ն: Վերջինների հետ հյ. իո (io)-ի համապատասխանության հարցը, կարծում ենք, լրացուցիչ քննության կարիք չունի, որովհետև մյուս երկրաբառների առնչությամբ դա արդեն արվեց: Այդ առումով «շեղում է» միայն հուն. ւ-ն Անտ/հոքոս < հուն. Ἀντίχος անցման մեջ, որը, ըստ իս, պիտի բացատրել փոխառյալ հատուկ անունների համաբանությամբ:

Սույն քննությունը հիմք է տալիս ասելու նաև, որ հին հայերենում իո (io) երկրաբառի առաջացումը պայմանավորված էր բացառապես հունական փոխառությունների իրողությամբ: Փոխառյալ հասարակ անուններից ակադ. Գ. Ջահուկյանի ցանկում տեղ է գտել միայն տպագ/իոն բառը<sup>67</sup>, իսկ դա նշանակում է, որ, ըստ Գ. Ջահուկյանի, մյուս փոխառությունները վերաբերում են գրաբարյան փուլին: Առավելապես (եթե ոչ՝ բացառապես) գրաբարյան փուլի սկզբին՝ 5-րդ դարասկզբին է վերաբերում նաև հատուկ անունների փոխառությունը, որովհետև, ինչպես մյուս փոխառյալ հատուկ անունները, դրանք նույնպես հայերենին են անցել Ս. Գրքի թարգմանության միջոցով:

### Եզրակացություններ

Վերոնշարադրյալից կարելի է եզրակացնել հետևյալը.

1) Ըստ էության՝ հին հայերենի ութ երկրաբառներից և ոչ մեկը՝ կայուն, թե ոչ կայուն տեսակի, անմիջականորեն չի սերում հ.-ե. երկրաբառառային համակարգից: Ճիշտ է, ընդհանուրինդեվրոպականում վերականգնվում է \*ēi երկրաբառ, բայց հայերենի էի (ēi) երկրաբառը ոչ միայն ծագումնաբանական առնչություն չունի դրա հետ, այլև չի ներկայացնում հ.-ե. որևէ այլ երկրաբառ: Հյ. էի (ēi)-ն ար-

67 Տե՛ս Ջահուկյան Գ., ՀԼՊՆԺ, էջ 620:

տացուում է «հ.-ե. բայահիմքի \*oi (> է) + վերջավորության \*-i (-ի)» կաղապարը:

2) Ներհայերենյան զարգացումների արդյունք են **էա** (ēa) և **իե** (ie) երկբարբառները, որոնք ձևավորվել են հայկական բաղադրությունների կազմում:

3) **էո** (ēo), **իե** (iē), **իո** (io) երկբարբառները տարբեր լեզուներից, հատկապես հին հունարենից կատարված փոխառությունների հայկական գրադարձումների արդյունք են:

4) Երկբարբառներից երկուսը՝ **եա** (ea)-ն և **իա** (ia)-ն, ըստ ամենայնի, երկբնույթ՝ խառն ծագում ունեն:

5) Որոշ վերապահումներով՝ կազմավորման ժամանակի առումով երկբարբառներից չորսը՝ **եա**, **էա**, **էի**, **իե**, վերաբերում են նախագրաբարյան փուլին, իսկ մյուս չորսը՝ **էո**, **իա**, **իե**, **իո**, գրաբարյան փուլին:

**Վարդան Զ. Պետրոսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են ընդհանուր և համեմատական լեզվաբանության, պատմահամեմատական հայերենագիտության, ընդհանուր և հայկական հնչույթաբանության հարցերը: Հեղինակ է 2 գրքի և 60-ից ավելի հոդվածների:

Էլ. հասցե՝ [vz.petrosyan@ysu.am](mailto:vz.petrosyan@ysu.am)

Summary

## THE OLD ARMENIAN DIPHTHONGS

(diachronic analysis)

Vardan Z. Petrosyan

*PhD in Philological Sciences*

**Key words** – diphthong, old Armenian, diachronism, Greek borrowing, Iranian borrowing, Hebrew, transliteration, pre-Grabar stage, Holy Book, personal name.

None of the eight Old Armenian diphthongs (comp. **եա**, **էա**, **էի**, **էո**, **իա**, **իե**, **իե**, **իո**) is a direct representative of the common Indo-European diphthongal system. Though the comparative Indo-European Studies restores the diphthong \*ēi

in the IE base language, the Armenian էի (ēi) does not reflect either this or any other IE diphthong. As a matter of fact, it comes to represent the IE pattern of the verb stem *\*-oi* (> է) +*\*-i* (-ի) ending. The other diphthongs also display a varied origin. Two of them - էա (ēa) and իե (ie)- are the results of word forming processes observed within the Armenian language, though certain Greek borrowings also contain examples with this phonemic sequence. Etymologically, եա (ea) and իա (ia) diphthongs are not homogenous, either. The former: 1) bears IE equivalents, most of which, however, are not diphthongs (diphthongs help to restore the prototype of only one word յաւուն (< \*kleitno- (?), most skeptically); 2) can be found in direct or inflectional cases of several nouns with both simple and compound structure, the etymology of which still causes certain doubts. Hence, their linguistic origin has not been universally agreed upon; 3) can be found in certain Iranian and Greek borrowings. The իա – is found 1) in Armenian words with a compound structure and 2) in Greek borrowings, both in common and proper names. It is noteworthy, that the borrowed words bearing իա (ia) are not fewer than the Armenian words. This lays grounds to suggest that եա (ea) and իա (ia) diphthongs owe their origin to word forming processes within the Armenian language and to borrowings. Diphthongs էո (ēo), իե (iē) and իո (io) are exclusively of borrowed nature. They can be traced in common and proper names of Hebraic and Greek origin, which, most probably, penetrated into Armenian in the form of Greek transliteration, namely, through the translation of the Holy Book. The beginning of the 5<sup>th</sup> century, the period of the invention of the Armenian alphabet, may be considered the conventional starting point of the formation of all of the eight diphthongs. Four of the diphthongs - էո, իա, իե, իո, which have penetrated into Armenian exclusively due to the translation of the Holy Book, refer to the Grabar stage of Armenian, while the other four - եա, էա, էի, իե -which can be seen in Armenian compound formations, inflectional and conjugation forms, as well as Iranian borrowings, most probably, originated in the pre-Grabar period of the Armenian language. Two of them, էա and էի, might have been formed back in the 2<sup>nd</sup> millennium BC.

## ДИФТОНГИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА (диахроническое исследование)

Вардан З. Петросян  
*Канд. фил. наук*

**Ключевые слова** – дифтонг, древнеармянский, диахрония, греческие заимствования, иранские заимствования, древнееврейский, транслитерация, прадревнеармянский период, Библия, личное имя.

Из восьми древнеармянских дифтонгов (ср. **եա**, **էա**, **էի**, **էո**, **իա**, **իե**, **իէ**, **ին**) ни один не является непосредственным представителем общеиндоевропейской дифтонгической системы. Хотя сравнительная индоевропеистика реконструирует в индо-европейском языке-основе дифтонг \*ēi, арм. **էի** (ēi) не отражает ни этот, ни какой-либо другой индо-европейский дифтонг, который является моделью «индо-европейской глагольной основы \*-oi (> է) + окончания \*-i (-ի)». Другие дифтонги тоже имеют неоднородное происхождение. Два из них, **էա** (ēa) и **իե** (ie), являются в большинстве случаев результатом внутриармянских словообразовательных процессов, несмотря на то, что встречаются в некоторых греческих заимствованиях, имеющих подобные звуковые последовательности. Этимологически неоднородными являются также дифтонги **եա** (ea) и **իա** (ia). **եա** 1) имеет индо-европейские соответствия, большая часть которых, однако не является дифтонгами (дифтонгическая праформа реконструируется для одного слова *իւանի* (< \*kleit̥no- (?) и то условно); 2) встречается в прямых или косвенных падежных формах ряда простых и сложных по составу существительных, этимология некоторых из них пока не изучена, следовательно, пока и не ясен также вопрос их языковой принадлежности; 3) встречается во многих иранских и греческих заимствованиях. **իա** присутствует 1) в сложных по составу армянских словах и 2) в греческих заимствованиях, причем как в нарицательных, так и в собственных именах. Важно также, что число заимствованных слов,

имеющих **իա** (ia), не уступает армянским образованиям. Отмеченные обстоятельства дают нам основание полагать, что в вопросе возникновения дифтонгов **եա** (ea) и **իա** (ia) важны и внутриармянские словообразовательные процессы, и заимствования. Исключительно заимствованную сущность имеют дифтонги **եօ** (ēo), **իե** (iē) и **իօ** (io). Они присутствуют в словах, имеющих древнееврейское и/или греческое происхождение, в составе собственных и нарицательных имен, которые, по-видимому, перешли в армянский из греческих заимствований, в частности, при переводе Библии. По времени образования всех восьми дифтонгов условной границей можно считать начало V в. – периода создания письменности. Четыре дифтонга – **եօ**, **իա**, **իե**, **իօ**, которые перешли в армянский язык исключительно при переводе Библии, относятся к периоду функционирования древнеармянского языка, а другие четыре – **եա**, **էա**, **էի**, **իե**, которые встречаются в армянских составных образованиях, в падежных и спрягаемых формах, иранских заимствованиях, по-видимому, оформились еще в прадревнеармянский период. В особенности два из последних – **էա** и **էի**, могли быть образованы уже во 2-м тысячелетии до н.э., поскольку используются в грамматических формах (в частности, в спряжении глагола).

## REFERENCES

1. “Aknarkner mijin grakan hayereni”, hat. A, Yer., 1972 (In Armenian).
2. “Ardzejn bararan haykaznean lezui”, Ant’ ilias, 1988 (In Armenian).
3. **Abrahamyan A.**, Grabari dzernark, Yer., 1976 (In Armenian).
4. **Acharjan H.**, Hayeren armatakan bararan, hat. IV, Yer., 1979 (In Armenian).
5. **Acharjan H.**, Hayots’ andznanneri bararan, hat. 1-5, Yer., 1942-1962 (In Armenian).
6. **Acharjan R.**, Imperfekt v drevnearmjanskom i nekotoryx indoevropskix jazykax, M., 1953 (In Russian).
7. **Acharjan H.**, Hayots’ lezvi patmut’yun, mas II, Yer., 1951 (In Armenian).
8. **Acharjan H.**, Liakatar k’erakanut’yun hayots’ lezvi, hat. IV, g. A, Yer., 1959, hat. VI, Yer., 1971 (In Armenian).
9. **Aghayan E.**, Ardi hayereni bats’ atrakan bararan, hat. 2, Yer., 1976 (In Armenian).
10. **Aghayan E.**, Grabari k’erakanut’yun, Yer., 1964 (In Armenian).
11. **D’jakonov I.**, Jazyki drevnej Perednej Azii, M., 1967 (In Russian).
12. **Gabrielyan Yu.**, Hayeren yev nakhahndevropakan lezun, Yer., 2001 (In Armenian).
13. **Gharagyulyan T’.**, Hin hayereni khonarhman hamakargi tsagumč, Yer., 1961 (In Armenian).
14. **Ghazaryan S.**, Hayots’ lezvi hamarot patmut’yun, Yer., 1954 (In Armenian).

15. **Ghazaryan S.**, Mijin hayereni patmut'yun, g. A, Yer., 1960 (**In Armenian**).
16. **Hyubshman H.**, Hayagitakan usumnasirut'yunner, Yer., 2004 (**In Armenian**).
17. **Hyubshman H.**, Hayereni k'erakanut'yun, Yer., 2003 (**In Armenian**).
18. **Jahukjan G.**, Ocherki po istorii dopis'mennogo perioda armjanskogo jazyka, Jer., 1967 (**In Russian**).
19. **Jahukjan G.**, Sravnitel'naja grammatika armjanskogo jazyka, Jer., 1982 (**In Russian**).
20. **Jahukjan G.**, Urartskij i indoevropskij jazyki, Jer., 1963 (**In Russian**).
21. **Jahukyan G.**, Hayeren stugabanakan bararan, Yer., 2010 (**In Armenian**).
22. **Jahukyan G.**, Hayots' lezvi patmut'yun. nakhagrayin zhamanakashrjan, Yer., 1987 (**In Armenian**).
23. **Jahukyan G.**, Hin hayereni verjatsants'neri tsagumě, "Hayots' lezvi hamematakan k'erakanut'yan harts'er", prak 2, Yer., 1998 (**In Armenian**).
24. **Karst Yo.**, Kilikyan hayereni patmakan k'erakanut'yun, Yer., 2002 (**In Armenian**).
25. **Mejchen Dzh. G.**, Uchebnik grecheskogo jazyka Novogo Zaveta, M., 2002 (**In Russian**).
26. **Meje A.**, Vvedenije v sravnitel'noje izuchenije indoevropskix jazykov, M.-L., 1938 (**In Russian**).
27. **Melikishvili G.**, Urartskij jazyk, M., 1964 (**In Russian**).
28. **Melikishvili G.**, Urartskije klinoobraznije nadpisi, M., 1960 (**In Russian**).
29. **Mesh'aninov I.**, Annotirovannyj slovar' urartskogo (biajnskogo) jazyka, L., 1978 (**In Russian**).
30. **Mesh'aninov I.**, Grammaticheskij stroj urartskogo jazyka, M.-L., 1958 (**In Russian**).
31. **Pedersēn H.**, Hayerēn yew drats'i lezunerē, Vienna, 1907 (**In Armenian**).
32. **Petrosean V.**, Hin hayerēni yerklarbarayin kazmut'iwnneri hnch'oyt'abanakan yev hnch'iwnabanakan arzhēk'nerē, "Haykazean hayagitakan handēs", Beirut', 2018, ēj 57-78 (**In Armenian**).
33. **Petrosyan V.**, Hin hayereni *p* (r), *n* (r) nayakanneri yev *l* (m), *u* (n) rŋgayinneri tsagumě yev hnch'abanakan arzhēk'aynut'yunē, "Hayagitut'yan harts'er", Yer., 2018, ēj 140-142 (**In Armenian**).
34. **Petrosyan V.**, Haykakan yev hndevropakan yerklarbarayin hamakargerē, "Vēm", Yer., 2015, N 3, ēj 115-127 (**In Armenian**).
35. **Petrosyan V.**, Hin hayereni yerklarbarayin yev yerabarbarayin kazmut'yunneri harts'i shurj (hamazhamanakya hayets'akerp), "BEH. Banasirut'yun", Yer., 2023, N 1, ēj 57-67 (**In Armenian**).
36. **Petrosyan V.**, Yerklarbarayin yev yerabarbarayin kazmut'yunnerē grabarum, "Ėndhanur yev hay lezvabanut'yan harts'er", Yer., 2016, ēj 211-231 (**In Armenian**).
37. **Porcig V.**, Chlenenije indoevropskoj jazykovej oblasti, M., 1964 (**In Russian**).
38. **Savchenko A.**, Sravnitel'naja grammatika indoevropskix jazykov, M., 1974 (**In Russian**).
39. **Semeren'i O.**, Vvedenije v sravnitel'noje jazykoznanije, M., 1980 (**In Russian**).
40. **Sobolevskij S.**, Drevne-grecheskij jazyk, M., 1948 (**In Russian**).
41. **Tumanjan E.**, Struktura indoevropskix imjon v armjanskom jazyke, M., 1978 (**In Russian**).
42. **Xachikjan M.**, Xurritskij i urartskij jazyki, Jer., 1985 (**In Russian**).